ԳԻՐՔԱԿՈՍՈՒԹԻՒՆ. ԱՌՏԵՂԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑՈՒ «ՆԿԱՏՈՒՄՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ» ԳԻՐՔԸ (ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱՏՊՈՒԹՅԱՆ 500-ԱՄՅԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ)

Հայ տպագիր գրքի պատմությունը փառապանքների ու զրկանքների, բայց նաև սխրանքների ու հաղթանակների շղթա է: Այդ պատմությունը կերտողները բազմաթիվ դժվարությունների միջով անցել եւ մեզ են ավանդել մշակութային անուրանալի արժեքավոր ժառանգություն:

Հայկական տպագրության առաջին շրջանից (1512-1800 թթ.) մեզ է հասել ավելի քան 1100 անուն հայալեզու հրատարակություն: Սակայն պահպանվածն այդ շրջանի գրատպության ամբողջական պատկերը չէ: Եղել են հրատարակություններ, որոնք ոչնչացվել են կամ մինչ օրս մնում են անհայտության մեջ: Քիչ չեն նաեւ եզակի օրինակով աշխարհասփյուռ գրադարաններում ու թանգարաններում պահպանված գրքերը: Հաճախ են պատահում գրքեր առանց տիտղոսաթերթի կամ հիշատակարանի, եզրահատված կամ ցեցակեր, երբեմն էլ գրադաշտի կամ նկարազարդումների պատռվածքներով: Իսկ որոշ գրքեր լույս են տեսել առանց տպարանի ու տպագրիչի անունների, տպագրման տարեթվի ու վայրի հիշատակության: Նմանատիպ գրքերը առանձին ուսումնասիրությունների նյութ են:

Մեր ուսումնասիրության առարկան մի գիրք է, որը նույնպես պահպանվել է թերի վիճակում. հիշատակարան չունի, տիտղոսաթերթի վրա տպարանի եւ տպագրիչի անունները նշված չեն: Խոսքը հայ միջնադարյան փիլիսոփայության ամենանշանավոր դեմքերից մեկի՝ Գրիգոր Տաթեւացու «Նկատումն ճշմարտութեան» գրքի մասին է, որը լույս է տեսել Կոստանդնուպոլսում ՌՃԿԲ. (1713) թվականին: Գրքի համառոտ նկարագրությունը բերված է ստորեւ.

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ՝ Նկատումն/ ճշմարտութե[ան]՝/ Տպագրեցաւ/ թվին հայոց. ռ/ճկբ. ի Հայրա/պ[ե]տ[ռ]ի[թ]ե[ան] Տեառն/ Աղէքսանդրի/. 1157 ԳրԳ/: *ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ՝* —Գրիգորի Եռամեծի եւ քաջ հռետորի՝ բան ը[նդ]դէմ մ[ա]րդ[ա]դաւան նեստորականացն. որք զբանն՝ բնակութ[եամ]ք ասեն ի մարմնի իբր ի տաճարի: Եւ ուրաւան զբնութ[եամ]ք միաւորութի[ւն] ա[ստուծո]յ մ[ա]րդ[ա]ցելոյն, եւ միայն բնակու[թեամ]ք, եւ շնորհիւ, եւ որդեկրու[թեամ]ք ելե[ա]լ ասեն յա[ստուա]ծութե[ան] փառս: Օգնեա Հոգի Ս[ուրբ]ք [Գ-Ժ]: —Հարցմունք առ երկաբնակս, որք ուրաւան զմինն ք[րիստո]ս մար-

դացեալ ասել. Այլ բաժանմամբ, կապարեալ ա[սպուա]ծ եւ կապարեալ մարդ: [Ժ]: *ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝* Շարվածքի չափը՝ 17,5x11 սմ, ունի մեկ փոքրագիր պատկեր Բ էջում, մեկ կիսախոշոր-գլխազարդ, մեկ զարդագիր եւ մեկ լուսանցազարդ Գ էջում, բնագիրը բոլորագրով:

Հայկական գրատպության պատմությանը, ինչպես նաեւ հայկական տպարաններին ու նրանցում հրատարակված գրքերին ժամանակին անդրադարձած հեղինակները՝ Գարեգին Զարբհանալյան («Պատմութիւն հայկական տպագրութեան. սկզբնաւորութենէն մինչ առ մեզ»), Գարեգին Լեւոնյան («Հայ գիրքը եւ տպագրության արվեստը»), Թեոդիկ («Տիպ ու տառ»), Ռաֆայել Իշխանյան («Հայ գրքի պատմություն»), Քնարիկ Կորկոտյան («Հայ տպագիր գիրքը Կոստանդնուպոլսում»), Արամ Բաբայան («Հայ գիրքը եւ տպագրությունը») եւ ուրիշներ, իրենց աշխատություններում «Նկատումն ճշմարտութեան» գրքի մասին չեն հիշատակում: Այս մասին հիշատակվել է միայն 1988 թվականին լույս տեսած «Հայ գիրքը 1512-1800 թվականներին» մատենագիտության մեջ[1], որտեղ հեղինակները ենթադրում են, որ 1713 թվականի այս հրատարակությունը Գրիգոր Մարզվանեցու տպարանի արտադրանք է: Նման եզրակացության համար հիմք է ծառայում այն հանգամանքը, որ գրքի անվանաթերթը նման է 1719 թ. Գրիգոր Մարզվանցու տպագրած Զենոբ Գլակի «Պատմութիւն Տարօնոյ» գրքի անվանաթերթին: Գրքում խոսվում է «Նկատումն ճշմարտութեան» գրքի պահպանված երկու օրինակների մասին՝ Երեւանի Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում եւ Կոստանդնուպոլսի Միջագյուղ թաղամասի Ս. Աստվածածին եկեղեցու մատենադարանում[22]: Պետք է ենթադրել, որ գրքի կազմողները Միջագյուղի օրինակի մասին ժամանակին տեղեկություններ են ստացել պոլսահայ բանասեր Գեւորգ Բամպուքճյանից (նրա անվանը հանդիպում ենք «Հայ գրքի» կազմությանն օժանդակած մարդկանց անունների ցանկում):

Ինչ վերաբերում է Մատենադարանում պահվող օրինակին[33] այն թերի է՝ առկա են գրքի միայն առաջին 16 էջերը, ավարտվում է «շնոր» հիշագրով: Կազմակից է 1733 թ. Պոլսում հրատարակված «Պտուղ զրաջանութեան» գրքին, որը նույնպես առանց տպարանի հիշատակության է[44]: Այս օրինակը 1976 թ. Մատենադարանին է նվիրել Պոլսի հայոց Շնորհք պատրիարք Գալուստյանը: «Նկատումն ճշմարտութեան»-ի Գ էջին գտնվող կնիքը՝ «Թ[ա]նգ[ա]ր[ա]ն վ[ե]ր[ա]ծնու[թ]ե[ան] ի Միջ[ա]գիւղ 1848» վկայում է, որ մինչեւ Մատենադարանում հայտնվելը այն պահվել է Պոլսում՝ Միջագյուղի վերածնության թանգարանում, իսկ գրքի սկզբում գտնվող չորս պահպանակ էջերի վրա առկա՝ Գեւորգ Բամպուքճյանի մակագրությունը. «Ա. գիրքը նորայայտ տպագրութիւն է: Գ. Բ.», թույլ է տալիս ենթադրել, որ հենց այս օրինակի նկարագրությունն է Բամպուքճյանը ժամանակին ուղարկել Հայաստանի ազգային գրադարանին, իսկ ավելի ուշ այդ նույն օրինակը հասել է Մատենադարան: Եթե

1 **Ն. Ոսկանյան, Ք. Կորկոտյան, Ա. Սավալյան,** Հայ գիրքը 1512-1800 թվականներին, Եր., 1988 (այսուհետեւ՝ Հայ գիրքը), էջ 201:

2 Մեր կողմից Կոստանդնուպոլսի պատրիարքարանին կատարված հարցման արդյունքում պարզվել է, որ Միջագյուղի մատենադարանը այսօր արդեն գոյություն չունի:

3 Մատենադարանի Հնատիպ գիրք Հ՝ 2013:

4 Դատելով կազմից՝ այս երկու գրքերը մեկ կազմի մեջ են ամփոփվել ԺԸ. դարի կեսերին:

այս ենթադրությունը ճիշտ է, ապա «Նկատումն ճշմարտութեան» գրքից պահպանվել է ոչ թե երկու, այլ միայն մեկ օրինակ:

Գրիգոր Տաթեւացու «Նկատումն ճշմարտութեան» գիրքը հեղաքրքրական է թե՛ իր բովանդակությամբ, եւ թե՛ տպագրությամբ: Տաթեւացու գրական ժառանգության մեջ նման անվանումով առանձին ստեղծագործություն հայտնի չէ, ուստի «Նկատումն ճշմարտութեան» անվանումով տպագրված գրքի առկա երկու գլուխները եւ ամբողջ շարադրանքը համեմատելով Տաթեւացու մյուս աշխատությունների հետ, պարզվեց, որ այն Գրիգոր Տաթեւացու «Գիրք հարցմանց»-ի մի հատվածն է: «Գիրք հարցմանց»-ը բաղկացած է 10 ստվար գլուխներից կամ հատորներից, մինչդեռ «Նկատումն ճշմարտութեան»-ը այս ստվարածավալ աշխատության միայն Բ. հատորի Է. գլխի Ա. պրակն է ամբողջությամբ եւ Բ. պրակի մի մասը[55]:

Սակայն ո՞ւմ տպարանում է իրականացվել «Գիրք հարցմանց»-ի հրատարակման այս փորձը: ԺԸ. դարի սկզբներին Կոստանդնուպոլսում գործում էին մի շարք հայկական տպարաններ՝ Գրիգոր Մարզվանեցու, Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու, Սարգիս դպրի, Էտկար Գնդեվանցու եւ այլն: Այս տպարաններում լույս տեսած հրատարակություններից շատերը աչքի են ընկնում փորագրանկարների (գլխազարդեր, լուսանցազարդեր, զարդագրեր, վերջնազարդեր, թեմատիկ պատկերներ) առատությամբ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ միեւնույն փորագրանկարի կլիշեն (փայտե տպաձեւ կամ տպագրական տախտակ) հաճախ կարող էր գործածվել տարբեր հրատարակիչների գրքերում. դա տարածված երեւույթ էր ինչպես Կոստանդնուպոլսի, այնպես էլ աշխարհի տարբեր քաղաքներում գործող հայկական տպարաններում: Հատկանշական է տիպդոսաթերթերի կլիշեների բազմակի գործածությունը: Տարբեր գրքերում միեւնույն տիպդոսաթերթի օգտագործման դեպքերում գրքի տպագրության թվականը, տպագրիչի անունը եւ տպարանի անվանումը կարելի էր պարզել միայն գրքի տիպդոսաթերթի բնագրից, հավելյալ զետեղված տիպդոսաթերթերից կամ հիշատակարաններից:

«Նկատումն ճշմարտութեան» գրքի տիպդոսաթերթը երկու կողմերում զարդարված է բուսական տարբեր պարունակող սյուներով, որոնք վերեւում ավարտվում են ոճավորված կամարով եւ կազմում տիպդոսաթերթի շարադրանքի շրջանակը: Կամարի ներքո պատկերված է ամպերի վրա նստած Հիսուս Քրիստոսը. նրա աջ ձեռքում խաչ է, իսկ ձախում՝ գունդ: Տիպդոսաթերթի ներքեւի մասում ճարտարապետական շինության պատկեր է. հատակը զարդարված է շահմատաձեւ հորինվածքով, որը խորության տպավորություն է ստեղծում: Բնագրի շրջանակի ստորին հատվածում «1157 ԳրԳ» մակագրությունն է: «1157»-ը հավանաբար կլիշեի պատրաստման տարեթիվն է՝ 1708, իսկ «ԳրԳ»-ն՝ Գրիգոր Մարզվանեցու մակագրությունը: Այս տիպդոսաթերթի պատկերը եւ մակագրությունը ամենայն ճշտությամբ համընկնում են Գրիգոր Մարզվանեցու տպարանում 1713 թվականին լույս տեսած Յովհաննես Մրքուզի «Կրթութիւն հաւատոյ» եւ 1719 թվականին՝ Ջենոբ Գլակի «Գիրք պատմութեանց երկրին Տարօնոյ» գրքերում տեղ գտած տիպդոսաթերթերին [նկ. 1]: Այս փաստը թույլ է տալիս հիմնավորել, որ տիպդոսաթերթի վրա նշված տարեթիվը եւ «ԳրԳ» մակագրությունը տիպդոսաթերթի կլիշեի անբաժանելի մասն են կազմում, հետեւաբար չէին

5 Համապատասխանում է՝ **Գրիգոր Տաթեւացի,** Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, տպ. Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու, 1729 գրքի 66-70 էջերին:

«Լեկատոնաց ցնծութեան» եւ «Լուսաբերեալ»-ի սկզբնամասերը՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Գրիգոր Լուսաւորչի պատկերներով

«Գիրք պատարագաց Սրբոյն Գրիգորի»

«Աստուածաշունչ»

«Գիրք պատարագաց Սրբոյն Սարգսի»

կարող առանձին-առանձին գործածվել: Ուստի միայն տիպոսաթերթի նմանությունը թույլ չի տալիս վստահ ասել, որ «Նկատումն ճշմարտության» անունով գիրքը Մարզվանեցու տպարանի արտադրանք է: Գրքի տիպոսաթերթի բնագրում վերնագրից, տպագրության տարեթվից եւ Կաթողիկոսի անունից զատ այլ հիշատակություն չկա, հետեւաբար անհրաժեշտ է ավելի մանրամասն ուսումնասիրություն՝ պարզելու համար, թե «Նկատումն ճշմարտութեան»-ը իսկապե՞ս լույս է տեսել Գրիգոր Մարզվանեցու տպարանում:

Քանի որ նույն՝ 1713 թ. Մարզվանեցին լույս է ընծայել Յովհաննէս Մրքուզի «Կրթութիւն հաւատոյ» գիրքը, ապա առավել նպատակահարմար է «Նկատումն ճշմարտությանը» համեմատել վերջինիս հետ:

Ինչպես արդեն նշել ենք, երկու գրքերում էլ օգտագործված է միեւնույն տիպոսաթերթի պատկերը: Սակայն, պատկերից բացի, նույն կերպ են շարադրված նաեւ տիպոսաթերթերի բնագրերը, որոնք բերված են ստորեւ.

1. Կրթութի[ւն] հաւատոյ. Տպագրեցե[ա]լ ի թվին հայոց. ռճկը. ի Հայրապ[ե]տ[ո]ւթեան Տեառն Աղէքսանդրի:

2. Նկատումն ճշմարտութե[ան]. Տպագրեցաւ թվին հայոց. ռճկը. ի Հայրապ[ե]տ[ո]ւ[թե[ան] Տեառն Աղէքսանդրի:

Քանի որ երկու գիրքն էլ լույս են տեսել նույն՝ 1713 թ., իսկ ԺԸ. դարում գիրք տպագրելը բավական երկար ժամանակ էր պահանջում, ապա քիչ հավանական է, որ Մարզվանեցին իր գրքի տիպոսաթերթի կլիշեն փոխ տված, նվիրած կամ վաճառած լիներ մեկ այլ տպագրիչի: Այս ենթադրությունը հիմնավորում է նաեւ Մարզվանեցու 1719 թ. տպագրած «Պատմութիւն Տարօնոյ» գիրքը, որտեղ դարձյալ օգտագործված է տիպոսաթերթի միեւնույն կլիշեն: Կարելի է ենթադրել, որ 1713 թ. ձեռնարկելով միեւնույն չափեր ունեցող երկու գրքի տպագրություն, Գրիգոր դպիրը որոշել է երկուսում էլ օգտագործել միեւնույն տիպոսաթերթի պատկերը, ինչը բնորոշ է նրա հրատարակություններին[66]:

Միանման են ձեւավորված նաեւ «Նկատումն ճշմարտութեան» եւ «Կրթութիւն հաւատոյ» գրքերի տիպոսաթերթերին հաջորդող երկու էջերը [նկ. 2]: Երկու գրքում էլ ձախ էջում փոքրագրապատկեր[77] է, իսկ աջը զարդարում են կիսահորան-գլխազարդը, լուսանցազարդը եւ զարդագիրը: Տարբեր են միայն փոքրագրապատկերը եւ զարդագիրը. «Կրթութիւն հաւատոյ»-ում պատկերված է ճգնավոր, իսկ «Նկատումն ճշմարտութեան»-ի նույն էջում հովիվների երկրպագության տեսարանն է: Վերջինս հանդիպում է նաեւ «Կրթութիւն հաւատոյ»-ի ԾԵ. էջում:

Հովիվների երկրպագության տեսարանը երկու գրքերում էլ տպագրված է միեւնույն կլիշեից: Այս փաստը հաստատվում է ո՛չ միայն փոքրագրապատկերների միեւնույն չափերի (7,2x11,4 սմ) եւ գծերի մանրամասն համեմատության արդյունքում, այլ նաեւ կլիշեի վնասված լինելու հետեւանքով պատկերի մի քանի հատվածներում առաջացած թերություններով, որոնք երկու գրքում էլ բացարձակ նույնն են: Կլիշեի վնասված մասերի թողած հետքերն առավել նկատելի են փոքրագրապատկերների ստորին մասում՝ կենտրոնից աջ, եւ արտա-

6 Նույն տիպոսաթերթի պատկերներն է օգտագործված հետեւյալ հրատարակություններում. «Մեկնութիւն սրբոյ Աւետարանին» (1717 թ.) եւ «Գիրք աղօթից», (1726 թ.) «Գիրք վիպասանութեան» (1709-10 թթ.) եւ «Գիրք հարցմանց» (1720 թ.) եւ այլն:

7 Էջով մեկ արված կամ բնագրի մեջ գտնվող թեմատիկ պատկերները:

հայտվում են պատկերի հորիզոնական գծերի համաչափությունը խախտող սպիտակ բծերի տեսքով:

«Նկատումն Ճշմարտութեան» գրքի Գ. էջը զարդարող կիսախորան-գլխազարդը, լուսանցազարդը եւ «Ա» զարդագիրը նույնպես Գրիգոր Մարզվանեցու ստեղծագործություններն են: Ուղղանկյուն գլխազարդը, որի հիմնական մոտիվը բուսանախշերով, կենտրոնում ծաղիկներով պարուրաձեւ զարդն է, բուսական ոճավորած տարրերից կազմված լուսանցազարդը, որի հիմքում կենաց ծառի մոտիվն է՝ վերեւում փոքրիկ խաչով, եւ թռչուն-ձուկ համադրությամբ կազմված զարդագիրը հանդիպում են ոչ միայն «Կրթութիւն հաւատոյ»-ում, այլեւ Մարզվանեցու մյուս հրատարակություններում[88]: Նույնը կարելի է ասել նաեւ Ժ. էջում առկա բաժանազարդի մասին՝ ծայրերը եզրափակող փոքրիկ զարդով:

Այսպիսով, «Նկատումն ճշմարտութեան» գրքում օգտագործված բոլոր զարդերն ու փորագրանկարները Գրիգոր Մարզվանեցու ստեղծագործություններն են, որոնք տարիների ընթացքում օգտագործվել են իր լույս ընծայած գրքերում:

Փորագրանկարների համեմատությունից զատ, ուսումնասիրվել են նաեւ տառատեսակները, շարվածքը, թղթի տեսակը եւ այլ մանրամասնություններ, որոնց արդյունքները փաստում են, որ քննության նյութ հանդիսացող հրատարակությունն իսկապես Գրիգոր Մարզվանեցու տպարանի արտադրանք է.

Համեմատվող երկու գրքերի շարվածքը եզրափակող գծային շրջանակի չափերը նույն են եւ կազմում են 7,3x12,9 սմ: Նույնն են նաեւ գրքերի էջերում առկա տողերի քանակը՝ յուրաքանչյուր էջում քսանական տող, ինչպես նաեւ շարվածքում առկա առանձին բառերի եւ բառակապակցությունների չափերը (օրինակ՝ եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ՝ 5,8 սմ, ասաց՝ 1,2սմ, զմարդն՝ 1,7սմ, բնութի՝ 1,8սմ, մարմին՝ 1,5 սմ, որդի՝ 1,1սմ, հօր՝ 0,7սմ, Արդ՝ 1,1սմ եւ այլն): Դա նշանակում է, որ երկու հրատարակություններում օգտագործվել են միեւնույն տպագրական տառերը: Դա կարելի է նկատել համեմատելով թե՛ գլխատառ եւ թե՛ փոքրատառ գրերի ձեւերը: Միանման են նաեւ ստորին լուսանցքների կենտրոնում արված էջակալումները, որոնք գրադաշտի հետ ամփոփված են շրջանակի մեջ եւ միեւնույն տառատեսակով են:

Մեկ այլ կռվան է թղթի նույնականությունը, որը հաստատվում է միեւնույն լուսադրոշմի առկայությամբ: «Կրթութիւն հավատոյ»-ի թուղթն ունի լուսադրոշմ երկու պատկեր, որոնք մեր տեսած օրինակներից ոչ մեկում[99] ամբողջական չեն. գրքի չափսին բերելու համար թուղթը հատվել է, եւ պատկերները կտրվել են: Տեսանելի է պատկերների միայն երկու երրորդ մասը [նկ. 3]: Լուսադրոշմի պատկերներից մեկն օվալի վրա տեղադրված գեղեցիկ թագ է, որ զարդարված է վերին մասը եզերող ութ փոքրիկ շրջաններով: Կենտրոնում չափերով քիչ ավելի մեծ եւս մի բոլորակ է, որը տեղադրված է թագի վերեւում սրացող ծայրի վրա: Թագի մեջտեղում կա բողբոջանման զարդ, որից աջ եւ ձախ երկուական պարուրաձեւ զարդեր են: Սրանք տեղավորված են քիչ ներքեւ գտնվող կրկնակի կամարի վրա, որի մեջ եւս երկու շրջաններ են, իսկ կենտրոնում՝ փոքրիկ շեղանկյուն: Ներքեւի օվալի կենտրոնում լատինական «R» տառն է:

Թագապատկերից 1 սմ ներքեւ լուսադրոշմի մյուս պատկերն է՝ չափերով ավելի փոքր.

8 Օրինակ՝ «Գիրք աղօթից» (1726 թ.), «Պատմութիւն Տարօնոյ» (1719 թ.), «Գիրք հարցմանց» (1720 թ.), «Յայսմաւուրք» (1730 թ.) եւ այլն:

9 Մատենադարանի Հնատիպ Ձեռ 1033, 1035, 1036, 1037, 1038:

այն ներկայացնում է մեկը մյուսի մեջ երկու շեղանկյուն, որոնց գծերին զուգահեռ՝ կողք-կողքի դասավորված են փոքրիկ շրջանակներ: Եւս մեկ շրջանակ պատկերված է կենտրոնում: Ամբողջությամբ վերցրած՝ այն նման է խաղողի ողկույզի ոճավորված պատկերի:

Նույն լուսադրոշմը առկա է նաեւ «Նկատումն ճշմարտութեան» գրքի էջերում. թագի պատկերը նշմարվում է Գ-Դ., Ե-Զ., իսկ «խաղողի ողկույզի» պատկերը՝ ԺԱ-ԺԲ. եւ ԺԳ-ԺԴ. էջերի վրա:

Այսպիսով, տիպոգրաֆերթը, գրքի հարդարման եղանակը, գրադաշտի, տառատեսակների, թղթի տեսակի եւ այլ մանրամասների ուսումնասիրությունը հաստատում է, որ 1713 թ. «Նկատումն ճշմարտութեան» անունով հրատարակված Գրիգոր Տաթեւացու «Հարցմանց գրքի» սույն հատվածը իսկապես լույս է տեսել Գրիգոր Մարզվանեցու տպարանում:

Սակայն ինչ նպատակով է Մարզվանեցին ձեռնարկել «Գիրք հարցմանց»-ի միայն մի մասի տպագրությունը: Պատճառը պետք է փնտրել ԺԷ. դարի վերջերին եւ ԺԸ. դարի սկզբներին Պոլսի հոգեւոր կյանքում կատարվող խմորումների մեջ: Մի կողմից պատրիարքության թեկնածուների պայքարը, իսկ մյուս կողմից լատին քարոզիչների մոլեռանդությունը գնալով ավելի կատաղի ձեւեր էին ստանում[1010]: Տաթեւացու «Գիրք հարցմանց»-ը, որը աչքի է ընկնում միջնադարյան փիլիսոփա-աստվածաբանների առջեւ ծառացած գրեթե բոլոր կարեւորագույն հարցերի լուսաբանությամբ, նման պայմաններում շատ կարեւոր դեր պիտի խաղար Հայ Եկեղեցու դավանաբանական անկախությունը եւ հայ ժողովրդի ազգային ինքնությունը օտարացումից պաշտպանելու հարցում: Այստեղ արծարծված են աստվածաբանական եւ դավանաբանական այնպիսի կարեւոր խնդիրներ (Աստծո եւ աշխարհի փոխհարաբերության հարցը, մարդու ստեղծման եւ նրա՝ Աստծո հետ առնչության, արարչագործության, անհրաժեշտության ու ճակատագրի եւ այլ հարցեր), որոնք առաջ էին քաշվել քրիստոնեական Եկեղեցու հայրերի կողմից եւ քննարկվել ողջ միջնադարում: Տաթեւացին այդ գիրքը գրել է «...իբրեւ ջատագով, եւ իբրեւ կրօնական վիճաբանութեանց առաջնորդող գրուած մը... Վասն զի այն ժամանակներ իրարմէ տարբեր կրօնքի եւ հաւատքի մարդիկ, ինչ դասակարգի եւ դիրքի ալ պատկանէին, իւրաքանչիւրը իր Սուրբ-Գիրքին փաստերով ու ապացոյցներով զինուած, վիճաբանութիւններ կ՚ընէին... Հայ եկեղեցականն ու Հայ աշխարհականը հաւասարապէս՝ Հարցմունքը իրենց անթին տակ, ատոր ոճով ու ատոր ապացոյցներով բանակռիւներ ըրած են, ինչպէս Հրէից, նոյնպէս Տաճկաց հետ, ինչպէս նաեւ հերձուածներու եւ դաւանաբանական խնդիրներու շուրջը»[1111]: Հաշվի առնելով իրադարձությունների այս ընթացքը, Մարզվանեցին հավանաբար առաջնային է համարել լույս ընծայել Բ. հատորի («Վասն թիւրութեան հերձուածողաց») այն հատվածը, որն ուղղված է նեստորականների դեմ:

Այժմ դժվար է ասել, թե տպագրելով «Գիրք հարցմանցի» Բ. հատորի Է. գլխի Ա. պրակից մինչեւ Բ. պրակի մի մասը, Մարզվանեցին ինչո՞ւ է գիրքն անվանել «Նկատումն ճշմարտութեան»: Չի բացառվում, որ վերջինս անավարտ տպագրություն է: Հավանաբար Մարզվանեցին հրատարակել է «Գիրք հարցմանց»-ի միայն մի մասը՝ նպատակ ունենալով հետագայում հրատարակել գիրքն ամբողջությամբ[1212]: Այդ մասին է վկայում այն, որ «Նկատումն

10 Տե՛ս **Մաղաքիա Օրմանյան,** Ազգապատում, հտ. 2, Էջմիածին, 2001, էջ 3120-3122:

11 **Բարգէն վրդ. Կիւլէսէրեան** , Իսլամը հայ մատենագրութեան մէջ, Վենետիկ, 1930, էջ 9-11:

12 Հայ տպագրության պատմությանը նման դեպքեր հայտնի են, օրինակ՝ ԺԷ. դարի առաջին

ճշմարտութեան»-ից յոթ տարի անց՝ 1720 թ, Գրիգոր Մարզվանեցու տպարանում իսկապես ձեռնարկվել է «Հարցմանց գրքի» տպագրություն, որը, սակայն, մնացել է անավարտ. լույս է տեսել միայն մի քանի պրակ: Իսկ եթե Տաթեւացու «Նկատումն Ճշմարտութեան»-ը անավարտ հրատարակություն չէ, ապա հավանաբար ունեցել է հիշատակական, որտեղ, Գրիգոր Մարզվանեցու հրատարակած մյուս գրքերի նման[1313] նշված են եղել տպագրիչի անունը եւ տպագրության հետ կապված այլ մանրամասներ: Սակայն, քանի դեռ չեն հայտնաբերվել գրքի այլ օրինակներ, որոնք կարծում ենք, նպաստելու են այս հրատարակության խնդիրների համակողմանի քննությանը ու նաեւ հաստատելու մեր եզրակացությունը, այս կամ այսպիսի այլ ենթադրությունները մնալու են սոսկ վարկածներ:

Երկար ժամանակ «Գիրք հարցմանց»-ի առաջին եւ միակ տպագրություն համարվել է 1729 թ. Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու տպարանի հրատարակությունը: Սակայն վերջին 50 տարիների ընթացքում հայտնի են դարձել Գրիգոր Մարզվանեցու՝ 1720 թ.[1414], եւ Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքում ավելի վաղ՝ 1685 թ., տպագրված օրինակների մասին[1515]: Այժմ, երբ պարզվեց, որ 1713 թ. լույս տեսած «Նկատումն ճշմարտութեան»-ը «Հարցմանց գրքի» մի մասն է, այն եւս պետք է համարել «Գիրք հարցմանց»-ի տպագրության հերթական փորձ:

ԳԵՈՐԳ ՆԵՐՍԵՍՅԱՆ
ՀԱՄԱՐԻԿ ՏԻԳՐԱՆՅԱՆ

կեսին որոշ հայ տպագրիչներ (Հովհաննես Մոլինո, Հովհաննես Ջուղայեցի), անցնելով բազմաթիվ դժվարությունների միջով, կարողանում են գլուխ բերել Աստվածաշնչի միայն մի մասի՝ Սաղմոսարանի տպագրությունը՝ հետագայում հույս ունենալով իրականացնելու իրենց հիմնական նպատակը՝ հայերեն Աստվածաշնչի ամբողջական հրատարակումը. տե՛ս **Ն. Սահակ ճեմճեմեան,** Հայ տպագրութիւնը եւ Հռոմ. Ժէ. դար, Վենետիկ, 1989, էջ 24-77:

13 Օրինակ՝ տպարանի անունը նշված չէ նաեւ Զենոբ Գլակի «Պատմութիւն Տարօնոյ»-ի՝ 1719 թ., «Այբբենարան»-ի՝ 1723 թ., «Ներբողեանք»-ի՝ 1734 թ. տիպոսաթերթերի վրա եւ հանդիպում է միայն հիշատակարանում:

14 Տե՛ս **Ռ. Իշխանյան,** Գրիգոր Տաթեւացու «Գիրք հարցմանց»-ի առաջին հրատարակությունը, «Էջմիածին», 1963, Թ-Ժ., էջ 51-55:

15 Գրիգոր Տաթեւացու «Գիրք հարցմանցը» տպագրելու առաջին փորձը արվել է 1685 կամ 1687 թ. Նոր Ջուղայում Ս. Ամենափրկիչ Վանքի տպարանում: Գրքի նկարագրությունը կատարվել է Ջ. Պտուկյանի՝ Հայաստանի Ազգային գրադարանին ուղարկած 4 էջ լուսապատճեններից, ուստի հնարավոր չէ պարզել գրքի էջերի քանակը: Հայտնի չէ նաեւ՝ գիրքը հիշատակարան ունեցել է թե ոչ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նոր Ջուղայում տրվարածավալ հրատարակությունները մեծ մասամբ մնացել են անավարտ՝ չի բացառվում, որ սույն հրատարակությունը եւս անավարտ տպագրություն է: